«ԱՐԵՎ» ԹԵՐԹԻ /ԵԳԻՊՏՈՍ/ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Շողիկ Ոսկանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը էլեկտրոնային շտեմարանների ստեղծման գործում դեռևս շատ հարուստ փորձ չունի, սակայն, ներդրվող ծրագրերի ու աշխատանքների արդիականացման, վերապատրաստման շնորհիվ արդեն հասցրել է բավականին աշխատանք կատարել և համացանցում ներկայացնել այն հանրությանը։

Ներկայում Ազգային գրադարանի կայք–էջում տեղադրված են մատենագիտության բաժնի հետևյալ էլեկտրոնային շտեմարանները՝ «Մամուլի հոդվածներ», «Հայ գրատպության 400-ամյակ», «Հայ գրատպության 500-ամյակ», «Հայոց ցեղասպանությունը մամուլում», «Ակադեմիա–70», «Արեւ» օրաթերթ»։

Ներկայացված շտեմարանների շուրջ աշխատանքն իրականացվել է «Greenstone» ծրագրի կիրառմամբ։ Ծրագրի առաջադրած միջոցները դյուրին ու արդյունավետ են դարձնում թե՛ շտեմարանի կառուցման աշխատանքը, թե՛ որոնողական համակարգը։

Անդրադառնանք «Արեւ» պարբերականի էլեկտրոնային շտեմարանին։ Ինչպես ներկայացված է շտեմարանի գլխավոր էջում՝

«Արև պարբերականի տպագրությունը 1915թ. սկսվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Այն 1921թ. հոկտեմբերի 7-ից սկսել է լույս տեսնել իբրև Ռամկավար ազատական կուսակցության Եգիպտոսի շրջանակի պաշտոնաթերթ: Պարբերականը 1924 թվականից հրատարակվում է Կահիրեում: Արևը 1970-ի վերջերից մինչ այժմ շարունակում է տպագրվել Հայ Ազգային Հիմնադրամի միջոցներով: Առաջին տնօրեն-խմբագրապետը Վահան Թեքեյանն է, արտոնատերը՝ Լևոն Մկրտչյանը: Լրագիրը հրատարակվել է 2 և 4 էջերով, շարվածքի չափերն են 58 X 40 սմ: Կահիրեի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր հիմնադրամի միջոցներով Արևի 1915-2000թթ. թվայնացված տարբերակը 2010թ. հուլիսին Կահիրեի ՀԲԸՄ-ի վարչության

որոշումով Հայաստանի ազգային գրադարանին է հանձնել ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովի ատենապետ պրն Պերճ Թերզյանը»։

Պարբերականի էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքներն սկսվել են դեռ 2011 թ.–ի մայիս–հունիս ամիսներից։ Կատարելով շտեմարանի ստեղծման առաջին քայլերը, կանգ առանք որոշակի խնդիրների առջև։ Մատենագիտական աշխատանքներում նոր մոտեցումներ էին անհրաժեշտ։ Առկա հարուստ բովանդակությունը հասանելի դարձնելու համար անհրաժեշտ էր խորագրերի և ենթախորագրերի մի այնպիսի բազա ստեղծել, որի մեջ հնարավոր կլիներ ամփոփել բազմաբնույթ ու բազմաբնագավառ նյութերի առատությունը։ Մի շարք խորհրդակցություններն իրենց արդյունքը տվեցին և աշխատանքն առաջ ընթացավ։

Այժմ շտեմարանը ներկայացնում է 1915–1946 թթ. ընկած ժամանակահատվածն ընդգրկող նյութերը։ Աշխատանքի իրականացումն սկսվել է երկու հոգանոց փոքրիկ խմբով, այժմ խումբն ընդլայնվել է և աշխատանքները շարունակվում են։

Ինչպես տեսնում ենք, շտեմարանը բաժանված է չորս գլխավոր խորագրերի, որոնք են՝ որոնման դաշտը, հեղինակ, պարբերական և բանալի բառ դաշտերը։ Խոշոր խորագրերն ունեն իրենց ենթախորագրերը, որոնք առավել մատչելի են դարձնում որոնողական աշխատանքները։ Հեղինակային դաշտում անունները դասակարգված են ըստ այբբենական կարգի։

Պարբերական դաշտն իրենից ներկայացնում է նախ՝ գլխավոր՝ Արեւ խորագիրը, որը բաժանվում է տարիների, ապա՝ ամիսների և օրերի։

Դիտարկենք 1915 թ. ներքո ներկայացված առաջին համարը, մայիսի 11, որտեղ «Մեր առաջին խօսքը» հոդվածով հանդես է եկել թերթի խմբագիր Վահան Թեքեյանը։ Թերթի մաշվածության պատճառով որոշակի բառեր անընթեռնելի են, սակայն, կարողանում ենք քաղել այն կարևոր տեղեկատվությունը, որը հեղինակը փոխանցում է պարբերականի ընթերցողներին՝ «Արեւ քաղաքական կուսակցութեան մը օրկան չպիտի ըլլայ, հակա–կուսակցական օրկան մըն ալ չէ սակայն», թերթը ի սկզբանե կոչվում էր լծվելու ազգային պաշտպանության շահերի գործընթացին։ 1915 թվականի ծանր ու դժվարին օրերն էին և Թեքեյանն իր հոդվածով դիմում է հայ ժողովրդին, բացահայտելով ըստ այդմ թերթի բնույթն ու էությունը՝ «Քեզ շողոքորթելով չէ, որ քեզի կարելի է ծառայել։ Քու սքանչելի առաքինութիւններուդ հետ ահռելի

թերութիւններ ալ ունիս, երեւան հանէ, պանծացո՛ւր ու տարածէ աշխարհի առջեւ առաքինութիւններուդ ամբողջ ծածուկ ու հարուստ գանձերը, և զսպէ, ստուերէ, սպաննէ բոլոր թերութիւններդ, բոլոր տկարութիւններդ։ Երբ տիեզերքը երկունքի մէջ է այսօր, երբ ազգերը գետի նման կը վազցնեն իրենց արիւնը և եւրբ իրաւունքի ու արդարութեան կողմէն կռուող մեծ դաշնակից ազգերը վաղը երկրագունտի կեանքին մէջ նոր դարագլուխ մը պիտի բանան, դո՞ւն պիտի մնաս միայն որ քու չկամութեամբդ եւ քու անմիաբանութեամբդ ձեռքերդ պարապ պիտի դառնաս ազգերու անօթութիւնը կշտացնել կոչուած ազատութեան սեղանին բաշխումէն, կամ կռնակ դարձնելով ծագող արշալոյսին՝ պիտի երթաս նորէն՝ եւ այս անգամ վերջնապէս գերեզմանիդ մութ դռնէն ներս մտնել ուրկէ իզուր դանդաղող քայլերով վայրկեան մը դուրս ելլեր փորձեր էիր։

Բայց դուն թոյլ պիտի չտաս որ այդպէս ըլլայ չէ՞...»։

Մենք ահա այս ոգիով եւ այս ոգին կրող ձեռնահաս եւ անձնուէր գործակիցներով, կ'սկսինք աշխատութեան, ու վստահ ենք թէ մեր աշխատութիւնը ապարդիւն չպիտի անցնէ»։

Եվ իսկապես, ապարդյուն չանցավ։ Թերթը հասավ իր նպատակին և, փաստորեն, ամուր ոտքերի վրա կանգնելով, սկսեց ու հաջողությամբ շարունակեց իր առաքելությունը։ Թերթի 3-րդ համարում (մայիսի 15) արդեն ծանոթանում ենք այն անձանց ցուցակին, ովքեր հայտնել էին թերթին աշխատակցելու իրենց պատրաստակամությունը՝ Տիգրան Կամսարական, Միքյէլ Կիւրճեան, Վահան Մալէզեան, Լեւոն Մկրտիչեան, Միհրան Պէկեան, Ս. Սապահ Գիւլեան, Գրիգոր Սարգիսեան, Յովհ. Սեթեան, Միհրան Տամատեան։ Նրանց հեղինակած հոդվածները կարելի է գտնել թվայնացված տարբերակի՝ հեղինակային դաշտում և կարդալ առցանց։

Շնորհիվ թերթի թվայնացված տարբերակի, «Արեւ»ի յուրաքանչյուր հոդված, յուրաքանչյուր հայտարարություն անգամ հասանելի է ուսումնասիրողին ու հետաքրքրվողին։ Թերթելով տարիների բովանդակությունը մանրակրկիտ ծանոթություն ենք ստանում ոչ միայն հայոց կյանքի, գաղթօջախների, այլ նաև համաշխարհային պատմության դրվագների մասին, որոնք եթե ոչ խոշոր, ապա գոնե՝ *հեռագրալուր* կոչվող փոքրիկ տողով անպայման լուսաբանվել են։

Առաջին իսկ համարում արդեն անդրադարձ կա ցեղասպանության դրվագներին։ Նյութը կոչվում է «Ծանր կացութիւն պոլսահայոց համար», տեղեկատվությունը հայերի ձերբակալություններն է լուսաբանում։ Հաջորդ հոդվածի վերնագիրը նույնպես խոսուն է՝ «Հայկական խնդիրը եւ Ն. Վ. Պօղոս փաշա Նուպարի պաշտօնը», իսկ «Վերջին լուրեր» խորագրի տակ՝ ռազմաճակատում տիրող դրությունն է, Դաշնակից զորքերի հարձակումները, քաղաքական իրադրությունը։

Թերթի էլեկտրոնային տարբերակում իր ուրույն տեղն է զբաղեցնում բանալի բառերի առկայությունը, որոնք որոնումն ավելի մատչելի են դարձնում։ Բացված են 45 խոշոր բանալի բառեր, որոնք, բնականաբար, բովանդակության ողջ պատկերը ներկայացնել չեն կարող, ուստի, բաժանված են ենթաբանալիների։ Օրինակ՝ «Հայոց պատմություն» բաժինը մասնատված է առանձին հատվածներով։ Բնականաբար, անդրադարձներ շատ են եղել *Հայկական հարց* և *Ցեղասպանություն* թեմաներով, որոնք ամփոփված են համապատասխան ենթախորագրերի ներքո։

Քանի որ նյութն սկսեցինք Վահան Թեքեյանի հոդվածով, ավարտենք այն Յ. Սեթեանի՝ «Արեւ»ում 1915 թ. դեկտեմբերի 24 ի 1–ին էջում հրատարակված, Վահան Թեքեյանին նվիրված «Մեծ մարդը» հոդվածից մի փոքրիկ հատվածով՝ «Մատուցանելու, նուիրելու այս պատրաստակամութիւնը, այս ձգտումը, այս բոցավառ տենչը իր անվանելի խորհուրդն է, իր գոյութեան պայմանը, իր տարբն ու իր կոչումը. վասն զի, արդարեւ, իր լեզուին մէջ այդ կրկին բառերուն յայտնած գաղափարին նշանն է իր վեհ ու սիրուած անունը։ Եւ ամեն անոնք որ իր անունը սիրով կարտաբերեն, իրենք ալ նոյն բանը ըսած, նոյն ուխտը ուխտած, նոյն բոցով բորբոքած կըլլան։ Այնպէս որ իր անունը նշանաբանն է նուիրումի, մեծ օրինակը, մեծ հանգանակը, մեծ դրօշակը, որուն տակ կը համախմբուին, սրտատրոփ, արդար դատին բոլոր ընկրկիլ չգիտցող ախոյանները»։